

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: [info@artsakhlib.am](mailto:info@artsakhlib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՀԱՄԱԿԱՐԳՆԵՐ ԳԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳՆԵՐ ԳՐԱԳԱՐԱՆ

ԳՅԴ ԵՍԿ 07թ

«Ազգ եւ ժառանգություն»  
Համահայկական  
երիտասարդական  
գիտաժողով



Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն  
Ստեփանակերտ  
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն  
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն  
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման  
կենտրոն» ՊՈԱԿ  
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»  
համահայկական  
երիտասարդական  
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.  
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
գիտության վաստակավոր գործիչ

Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած  
Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

ծառանգը պետության, որ Հայք կոչվեց, ու թե մենք չէ, էլ ո՞վ պիտի տերը լինի մեր արմատի ու ակունքի, մեր պապերի երազանքի:

*Լիանա Մինասյան  
«Նիսանություն» ՄՄԵԿ*

**Ձայնավորների հնչյունափոխությունը Մարտունու շրջանի մանրատեղանուններում**

Հնչյունափոխությունը լեզվի գարգացման ներքին օրինաչափություններից մեկն է, որ միշտ ուղեկցում է լեզվին վերջինիս կենդանի գոյության ողջ ընթացքում:

Հնչյունափոխության հետեւանքները բազմազան են, որոնք առաջանում են երկու գործոնի շնորհիվ հնչյունի գրափած դիրքի եւ հնչյունաշարքում միմյանց վրա թողած փոխազդեցության: Ավարտված դիրքային, փոխազդեցական հնչյունափոխությունները վեր են ածվում պատմականի:

Արցախի Մարտունու շրջանի մանրատեղանունների կազմում հանդես եկող բաղադրիչներն զգալի առանձնահատկություններ ունեն ընդհանուր-պատմական (տարածամանակյա) հնչյունափոխության տեսակետից: Գրաբարի համեմատությամբ զգալի փոփոխություններ են կրել հնչյունները բառի բոլոր դիրքերում բաց, փակ, շեշտակիր եւ շեշտագուրկ վանկերում, միավանկ եւ բազմավանկ բառերում: Այդ փոփոխությունները հիմնականում պայմանավորված են լեզվի մեջ գործող տարբեր օրենքներով, ինչպես նաեւ արտասանության ուժգնացմամբ եւ թուլացմամբ:

*ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԿՐԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Գրաբարյան *ա* ձայնավորը մանրատեղանունների միավանկ եւ մեկուկես վանկանի բաղադրիչներում մնացել է անփոփոխ, ինչպես՝ *արտ>արտ* (*Պառավ արտ*), *ծառ>ծառ* (*Պըրիվածառ*), *արջ>արջ* (*Արջէն պատակ*), *հարթ>հարթ* (*Շէխու հարթ*), *կալ>կալ* (*Լըղարէն կալ*), *քար>քար* (*Կլարունը քար*), *խաչ>խաչ* (*Քօլէն խաչ*), *թաղ>թաղ* (*Գյունէ թաղ*), *ժամ>ժամ* (*ժամ*), *վանք>վանք* (*Շուքա վանք*), *քաք(ք)>քաշկը* (*Քաշկա ծօր*), *սար>սար* (*Փլէկ սար*), *ակն>ակնը* (*Մօշին ակնը*), *խաղ>խաղ* (*խաղ ընելի արտ*) եւ այլն:

Երկվանկ բառերում *ա*-ն մնացել է նույնը, ինչպես՝ *մարագ>մարաք* (*Ջաքճա մարաք*), *պառաւ>պառավ* (*Պառավ արտ*),

*ջուխտակ >ճօխտակ* (*Ճօխտակ յէսծէ*), *պատակ>պատակ* (*Լէն պատակ*) եւ այլն:

*Ա*-ն վերածվել է *ը* մային *ա*-ի հետեւյալ բառերում կարմիր>կ'արունը (*Կ'արունը յէսծէ*), տանձ>տանձ (*Տանձ ախպուր*), կապոյտ>կ'պալուտ (*Կ'պալուտ քը'ոծ*), անկին>անգուն (*Քունէ անգուն*), անդ>հանդ (*Յը'տտ հանդ*), արին>արուն (*Աըվիգ'արուն ծօր*), գագ>գ'ալ (*Գ'ալգր*) եւ այլն:

Շեշտանախորդ վանկի *ա* ձայնավորը վերածվել է *ի*-ի, ինչպես *ակնանի>ընկանէ* (*Էրկու ըկնանէ*), *անալի>ընալի* (*Նպնուց ընալի ախպուր*), *ալակուշկուշ>ըլկուշկուշ* (*Ըլըկուշկուշէն գունէ*), *աղանի>յըղօնեճ* (*Յըղունեճին ծօր*):

*Ա* հնչյունը մի շարք բառերում դառնում է *է*, ինչպես *ցախ>ճէխ/ճէխէն ծօր*), *ջաղաց>ճէղաց* (*Ըսլանանց ճէղաց*), *դափ>տէփ* (*Տէփէն տափ*), *դժուար>տիժէր* (*Տիժէր ծօր*): Ա>ը

*Ա*-ն, որ գրաբարում կայուն ձայնավոր էր եւ հնչյունափոխության չէր ենթարկվում, Գարաբաղի բարբառում կրում է փոփոխություն:

Շեշտանախորդ վանկի *ա* ձայնավորը վերածվում է *ը* ձայնավորի կամ ուղղակի դուրս է ընկնում:

Մանրատեղանուններում բառասկզբի *ա* ձայնավորը սղվել է.

- Ավետիս* – *Վիտիսանց տափ*
- Ավանես* – *Վընեսաց տընէր* բառերում:

Մի շարք մանրատեղանուններում բառասկզբի *ա* ձայնավորը հնչյունափոխվել, դարձել է *ը*:

- Անուշ* – *Ընուշէն ախպուր*
- Արտն* – *Ըրտնէն ջալա*
- Ախպուր* – *Ըխաիրին ծօր*
- Արցախ* – *Ըրցախպուր*
- Սալան* – *Ըսլանանց ճէղաց*
- Ակնը* – *Էրկու ըկնանէ*
- Աշան* – *Ըշանա ցաքժօտ*
- Արկաթ* – *Ըրկաթէ թունը*

Կան մանրատեղանուններ, որոնց առաջին վանկի *ա* ձայնավորը դարձել է *ը*:

- Քաշ* – *Քըշաճուր*
- Լալեճ* – *Ըլլեճին չափար*
- Պարե* – *Պըրիվածառ*
- Ղազար* – *Ղըզարանց յէյվան*

Պարկ – Պորկակժ՛ր  
 Մակիչ – Մրկիչանց ախալուր  
 Ճակատ – Ճրկատեն արտ  
 Պառավ – Պրռավանց դօբի  
 Նահատակ – Պիծի նրհատակ  
 Ղավալ – Ղրվալեն չօթակ  
 Չափար – Չրփարեն ծօր  
 Կաթնը – Կրթնախպուրին տօջ  
 Քավթառ – Քրվթառեն ծօր  
 Սարալ – Սրրալանց քժ՛րօ  
 Ղալա – Ղրլեն խութ՛  
 Պառակ – Սլ՛ծ պրռակա տօջ  
 Նալբանդ – Նըլբանդանց սօրփ  
 Վար – Վրրոտեն հրղէ  
 Խամ – Ղրմիթին խըմիատ  
 Ղանդալ – Ղընդալլու ք՛աիրիզ  
 Կալ՛ – Կըլ՛ատըլ՛դ  
 Քամէ – Քըմախաչ  
 Ետդար – Երդարտեն կարին  
 Բազմավանկ մանրատեղանունների առաջին եւ երկրորդ  
 վանկերի ա ձայնավորները հնչյունափոխվել են Ը-ի  
 Ջալաղ – Ջըղլըղօտ  
 Տավար – Տըվըրածեն տափ  
 Վարթաբեդ – Վրթըրբեդին տափ  
 Խազա – Խըզ՛ըզաքօլ  
 Կաքալ – Կըքըվախալուր  
 Շահնագար – Շընըզարեն պատառը  
 Յաճար – Յըճըրատըլ՛դ  
 Երկրորդ վանկի ա-ն դարձել է ը  
 Կումաշ – Կունըշկըլ՛օխ  
 Եղաց – Երղըցուն ծօր  
 Բօստան – Բուստըններեն ծօր  
 Մանրատեղանուններ կան, որոնց երկրորդ վանկի ա-ն սղվել է՝  
 ծարավ – Ծըրվաճղլը  
 Ղահրաման – Ղըրմանանց տափ  
 Փարամագ – Փիրմագին կալ՛

Ա>ի

Մանրատեղանունների առաջին վանկի ա-ն հնչյունափոխվել է Ի-ի

Նասիր – Նխսիրին տըլ՛դ  
 Թափա – Թիփենե  
 Բաթմալ – Բիթմըզալըլ՛դ. այստեղ առաջին եւ երկրորդ  
 վանկերի ա ձայնավորները միանգամից հնչյունափոխվել են Ի-ի:  
 Գրաբարյան *ե* ձայնավորը բառակզբում եւ բառամիջում  
 վերածվել է է-ի: Օրինակ *երկու>երկու ըկնանէ*, *երկայն>երկան* (*երկան*  
*թալա*), *թեղի>թեղի* (*Թեղուն տակ*), *գետ>կէտ* (*խօսնաշեն կէտ*) եւ այլն:  
 Սի շարք բառերում *ե* հնչյունը վերածվել է ը՛ երկբարբառի, ինչպես  
 մեղր>մը՛ղըր (Մուղրու ծօր), մեծ>մը՛ծ (Սը՛ծ նրհատակ), տեղ>տը՛ղ  
 (Իշեղեն տը՛ղ), ցեխ>ցը՛խ (Ցը՛խ ծօր), քերծ>քը՛րծ, կեռ>կը՛ռ (Կը՛ռ  
 թաղ), ներքին >նը՛րքե (Նը՛րքե թաղ) եւ այլն:

Բառամիջում *ե*-ն վարածվել է Ի-ի. *գերեզման>կիրեզման*  
 (*Կիրեզմընօտեն քամակ*) բառում:

Բառամիջում *ե* -ն ընկել է *եկեղեցի* բառում. *եկեղեցի>յիխօժ*,  
*յիխօ* (*Քօհնա յիխօժ*):

Գրաբարյան է երկբարբառային ձայնավորը մնացել է  
 անփոփոխ շեն>շեն (*Շենին ծուր*), կետ>կէտ (*Դաչա կէտ*), դեմ>տեմ (*Ծօխտ*  
*տեմ*), դետ>տե (Տե ախալուր) եւ այլ բառերում:

Բեկ, գմբեթ բառերում *ե* հնչյունը դարձել է ա: *բեկ>բալ*  
 (*Բալժին թունը*), *գմբեթ>քընըբաթ* (*Քընըբաթ*):

Բառամիջում է-ն հնչյունափոխվել է Ի-ի, ինչպես *դեզ>տիզ*  
 (*Տիզին չըխտը*), *դեպի>դիբի* (*Դիբիզդեղ*) եւ այլն:

Է>ի

Ունենք մանրատեղանուններ, որոնցում է-ն հնչյունափոխվել է Ի-ի  
 Շեն – Շինատըլ՛դ  
 Ավտոխ – Վիտոխանց տափ  
 Շեվ – Փաթունց շիվօտ  
 Կիրեզման – Կիրեզմընօտեն քամակ

Է՞ր

Այս հնչյունական օրենքը գործում է բառամիջում, ինչպես  
 Վեվերթ – Վըվերթին կալ՛ Կեր – Կըրըվերին ծօր  
 Կան մանրատեղանուններ, որոնցում է-ն սղվել է  
 Պավել – Պավլուր բաղ  
 Վրեսկե – Վըսկախաչ  
 Գյունե – Գունուն կյունըլ՛ր

**Հացք - Հացուն տակ**

Բառամիջում *ը* թույլ ձայնավորը հանդես է գալիս բառասկզբի կամ բառավերջի երկու բաղաձայնների միջև, ինչպես *գորուգ>կըռոգ* (Կորորգնօտեն դարա), մեղր >մլժըր (Մուղրու ծօր), պղինձ>պղինձ (Պղղընձի կալ՛), գլուխ>կըլ՛օխ (Բաղեն կըլ՛օխ) եւ այլն:

Կան բառեր, որոնց մեջ գաղտնավանկի *ը*-ն դարձել է *ու* կամ *ու*, օրինակ կկու>կուկու, (Կուկու), պղտոր>պուլտօղ (Պուլտուղա՛ ճուլ), խնձոր>խունձօր (խունձուլաբար), կտոր>կուտուր (Քարեն կուտուր սար) եւ այլն:

Գրաբարյան *ն* վերջնահնչյունի եւ նախորդող բաղաձայնի միջև եղած գաղտնավանկի *ը*-ն անցել է *ն* վերջնահնչյունից հետո, ինչպես *ակն>ակնը* (Մօշին ակնը), *ոլոռն>հուլունը* (Հուլիվունին բաղ), *սխեռն>սխեռնը* (Սխեռնը ախպուր):

Մի շարք բառերում բառամիջում եւ բառավերջում *ի* ձայնավորը դարձել է *է*, ինչպես *ուղի>հըղէ* (Շառ հըղէ), *ցից>ցէց* (Տէց բար), *մթին>մըթէն* (Սըթէն ծօր), *պղինձ>պըղինձ* (Պղղընձի կալ՛), *չիւ>չէվ* (Վարմուր շէվ), *հինգ>հէնգ* (Հէնգ շէն), *ոսկի>վը՛սկէ* (Վը՛սկէ խաչին ախպուր):

Ճառանուններ կազմող *-ենի* վերջածանցի *ի* մասնիկը շեշտի տակ լինելով մնում է նույնը, ինչպես *թզենի>թուզի* (Թուզուն ախպուր), *բոնչենի >պրորչնի* (Պրորչնուն տակ):

Ճառանուններ կազմող *ի* մասնիկը շեշտից հետո դառնում է *է*, ինչպես *թեղի>թէղէ* (Թէղուն տակ), *ճողպոր(ի)>ճըղպօրէ*, *կաղնի>կաղնէ* (Ծօխտ կաղնէ), *հացի>հացէ* (Հացուն տակ), *ուռի>հօրէ* (Հօռուն բօլ), *սալոր(ենի)>շուլօրէ* (Շուլօրուն դուգ՛):

Փակ վանկի *ի*-ն դարձել է *ու* կամ *ու*, ինչպես *կարմիր>կարմուր* (Վարմուր քը՛րծ), *ծիմ>ճում* (Ծրմօտեն բաղ):

**Ի>ը**

Մանրատեղանունների առաջին վանկում *ի* ձայնավորը հնչյունափոխվել, դարձել է *ը*

- Խինդօղնը – Խընդօղնուն ծօր*
- Ռիսկ – Ռըսկըրիան*

- Մի շարք մանրատեղանուններում *ի*-ն սղվել է *Պուլիգ՛ - Պուկընէ*
- Չարչի - Չարչունց տօն*
- Բախչի - Բախչունց չափար*
- Վարթի - Վարթուն տը՛ղ*

*ի* ձայնավորը հնչյունափոխվել, դարձել է *ը* մանրատեղանվան երկրորդ վանկում

**Պրղինձ - Պղղընձի կալ՛**

*Ո* ձայնավորը միավանկ եւ երկվանկ բառերում փակ վանկում վերածվել է օ-ի, ինչպես *խտտ>խօտ* (խօտահար), *խոգ>խօգ* (խօգ՛ին փիրմա), *փոս>փօս* (Փիլին փօս), *ծով>ծօվ* (Ծօվ), *մոշ>մօշ* (Մօշխըմիատ), *չոր>չօր* (Շօրեն դարա), *Սոնա>Սօնա* (Սօնեն բաղ), *սխտոր>խըստօր* (խըստօրեն բաղ):

Փակ վանկի *ո* ձայնավորը հնչյունափոխվել է քմային *օ* ձայնավորի *սալոր* (ենի) - *շըլօր(ի)* (Շըլօրուն դուգ՛), *պղտոր>պուլտօղ* (Պուլտուղա՛ճուր) բառերում:

Մի շարք բառերում *ո* հնչյունը դարձել է *ու*, ինչպես *գոմ >վում* (Ղուզուն կումը՛ր), *Պողոս>Պուղի* (Պուղունց բաղ), *տորոն>տուրուն* (Տուռնարտ), *չորթան>չուրթան* (Չուրթանեն կապ), իսկ բոլոր բառում այն դարձել է *ու* բոլոր>պուլուր (Պուլուր պուլտը):

*Խոտոր* բառում *ո*-ն կրում է *ո>ու* փոփոխությունը *խոտոր>խուտուրու* (խուտուրու հըղէ):

Հող բառում *ո* հնչյունակապակցությունը դառնում է *վը՛ հող>վը՛ղ* (Ղըղեն վը՛ղ), իսկ *հոր* բառում *վէ հոր>վէր* (Կըրըվէրին ծօր):

**Օ>ու**

Մանրատեղանունների առաջին վանկում *օ*-ն հնչյունափոխվում է *ու*-ի՝

- Թօփալ – Թուփալեն դուգ*
- Օսեփ - Ուսեփանց տակի*
- Բօստան - Բուստըններեն ծօր*
- Օջախ – Ուջըղատը՛ղ*

**Բօլ – Բուլասար**

*Օ>ու* հնչյունական օրենքը գործում է նաեւ մանրատեղանունների երկրորդ վանկում

- Յուղօնէ՛գ՛ – Յըղունէ՛գ՛ին ծօր*
- Պուլտօղ – Պուլտուղա՛ճուր*

**Օ>ը**

Բառամիջի *օ*-ն հնչյունափոխվում, դառնում է *ը*

- Բօր – Բըրըբօս ախպուր*, *Սօնը >Սըռնօտ*
- Երղպօրօտ – Եըղպըրօտուն տակ ախպուր*

Ու երկբարբառային ծայնավորը միավանկ եւ մեկուկես վանկանի բառերում հատկապես խուլ, երբեմն նաեւ ծայնավոր հնչյունից հետո դառնում է *օ*, *ինչպես տուն>տօն (Տօն քար), դուռն>տօռնը (Կլայանց տօռնը), ծուտ>ծօտ (Ծօտն բաղ), քուխտ>ծօխտ (Ծօխտ ճուր)*:

*Սուրբ>սօրփ (Նըլբանդանց սօրփ)* բառում կատարվել է *ու>օ* հնչյունափոխություն:

*Ու-ն քմայնացել է քուր>ծուր (խութին ճուր)* բառում:

Երկվանկ բառերի վերջին փակ վանկի *ու-ն* դառնում է *օ*, ինչպես *պտուկ>պըտօկ (Քր՛րծէն պըտօկ)*:

*Ու>ը*

Մանրատեղանունների առաջին վանկի *ու-ն* հնչյունափոխվում է *ը-ի*

*Ուլուրաբ - Ըլուրաբանց դուլզ*

*ճում - Ծըմօտն բաղ*

*ճուղուպուր - Պօժկա Երդպօրէ*

*ճուր - Երրտափէր*

Չայնավորների այս տարաբնույթ հնչյունափոխությունները փաստում են, որ մանրատեղանունները հայերենի հնչյունական համակարգի քննության խիստ արժեքավոր աղբյուր են:

*Լուսինե Մարգարյան*

*«Մեսրոպ Մաշտոց» համալսարան*

### **Գրականացման՝ որպես լեզվական իրողության արժեքը բանահյուսության մեջ**

Հասարակական կյանքին ու կեցությանը համապատասխան փոխվում են հասարակական գիտակցությունն ու մտածողությունը: Լեզուն էլ, ծառայելով հասարակությանը որպես մտածողության ձեւ եւ նյութական դրսեւորման միջոց, փոխվում ու զարգանում է հասարակական գիտակցության զարգացմանը զուգընթաց: Յուրաքանչյուր երեւույթ թե պատմական, թե քաղաքական, թե հասարակական ու տնտեսական, դառնում է լեզվական իրողության առկայացման պայման, լեզվական իրացում ստանում եւ արտահայտվում լեզվի մեջ:

Գրականացումը՝ որպես լեզվական երեւույթ, արժեվորվում է պատմական հիմքի վրա: Այն գրական լեզվի ազդեցությունն է բարբառի



Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,  
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:  
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ  
*Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,  
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,*

